

13. Տմարդիկ

Բայց քանզի անագորոյնք է տմարդիկը
էին, զգրոց ընթերցուածս ի մէջ բերէ
(Ոսկ. մ. բ. 14, էջ 584):

Նշանակութեամբ նոյն է տմարդի բա-
ռին հետ. նշիւ չգիտէ բառս, բայց Աւ-
ծեալն ունի:

14. Օրէնսդէնդ

Քանզի ի ստէպ օրէնսդէնդ՝ զայն եւս
յաւելոյր, եթէ « Բայց ես ասեմ ձեզ »
(Ոսկ. մ. ա. 25, էջ 390):

Օրենդոցն « օրէնք դնել, օրէնքներ հաս-
տատել » առանձին բարդութիւն մ'է և ո՛չ
թէ զոյգ բառ, ինչպէս կարծեք է անշուշտ
ՆՀԲ. վերջին պարագային պիտի ունե-
նայինք ի դեմք ստեպ օրենս. նոյն բառ-
գութեան ուրիշ ձևերն են օրինադրել,
օրենսդրել. հմմտ. Զամենայն ի բարի և
յօգուտ օրինադրեաց. Օրինադրեաց պա-
կել, Ոսկ. Հոռվմ. էջ 325. Աստուած իսկ
զսոյնս օրէնսդրեաց, էջ 330. Որք զբախ-
տին և զհրամանաց կրօնս օրէնսդրել
ժպրհին. Ոսկ. մ. բ. 16, էջ 418. Նոյն
ոճով ունինք մեղադրել, քանադրել, ուն-
կրեդրել, բուրն ալ յետին:

Հ. ԱՅՈՒՅԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԱՄԵԿԻ ՍՊԱՌՆԱԼԻԲ

Մամիկը անխոնջ, ինձից միշտ զըժգոհ, բայց միշտ էլ զըթոտ.
Մի օր զայրացած, կեանքն անիծելով, ըշտապեց ինձ մօտ...

« Համօ, թէ կըրկնես չարութիւնդ անվերջ,

Քեզ պիտի փակեմ տան մուրձ գուրի մէջ,

Ուր պիտի մընաս եօթն օր, եօթն գիշեր.

Քեզի իբր ընկեր կան այնտեղ իժեր,

Հազարոտուններ. դեհ զընա ապրէ

Բուէնի նըման անսէր, անընկեր »:

Այդ օր, իմ մամիկ այնքան բան յիշեց, սողուններ կանաչ,

Օձի տեսակներ, որ ես սարսափեց եղայ անճանաչ,

Խեղճ, անբախտ Համօ, ըսի իւրովի,

Խաղալիկ ես դու՝ ինչպէս շիւղն՝ հովի.

Ե՛րբ ազատուելու ես մամի խոշոր

Ակնոցից ջանթող նայուածքից խոժոռ.

Դեհ, ինչ անես, որ չընկնես այդ գուրը,

Ուր պիտի ապրես անսէր, անընկեր...:

* *

Այդ օրից ի վեր քրտան տարի կայ, որ հողի խաւեր
Ծերուկ, պաշտելի մամիս պահում են այն գիւղում աւեր.
Եւ հազար խօսքից ինչ ժամանակը մըտքումս էր կընքեր
Այն էր, որ միակ բուէնն է լինում անսէր անընկեր:

Թէ ո՛վ մամիկիս այդ բանն աւանդեց, ինձ երբեք չասաց,
 Բայց մի դէպք ուղղեց իմ թիւը կարծիքը բու՛ճնի մասին:
 Մեր հայրենի տունն շատ յայտնի տեղ էր: Մեղուսասար լեռան
 Անտառոտ լանջքին, ուր եւ բացուած էր մի ձորաքերան:
 Ամբողջ գիշերը, կարմիր տանիքի ծըխնելոյզի վեր
 Գալիս էր լալկան մի վույրոջ բու՛ճ՝ իբրեւ գութաքեր:
 Ամիսներ յետոյ, լուսնակ մի գիշեր, սաստիկ վերդովուած,
 Զէնքս առի, մըթում նըշնեցի եւ... բա՛մ, բու՛ճը ընկաւ...:

Բայց յաջորդ գիշեր մընացի ապշած, երբ նոյն տեղ թափ
 Մի այլ բու՛ճնի աւելի աղու վո՛ւյի ձայնն առի:
 Այս անգամ սա՛ էր եկած նոյն ժամին ողբալու անկուշտ՝
 Մինչեւ որ դարձեալ, մի լուսնակ գիշեր, պայթեց իմ փամփուշտ...:
 Ժամանակ յետոյ, ման գալով մարգում, ինչ տեսնեմ յանկարծ.
 – Ոտիս տակ փռուած երկու դիակներ անսէր, գիրկընդխառն:

Փարիզ

ՀԱՅԿ-ԱՐԱՄ

Թ Է Ո Ղ Ի Կ

“ՍՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅԸ,”

1926

Քսան երկար և յոգնատանջ տարինեւ,
 բու գրական պսակով հրապարակ ելաւ
 Թէոդիկ, և իբրեւ յարատեւութեան չքնադ
 կոթող մը կանգնած է հայ գրականոււ
 Թեան խորտակուած դաշտին մէջ:

Մեր գրականութիւնը կացնահար ան-
 տառի մը կը նմանի, որուն սաղարթագեղ
 մայրիները իրենց կենսաբեր բուններէն
 կտրտուելով տարածուած են ցուրտ գետնի
 վրայ՝ իբրեւ բողբոջի յաւերժական կոթող-
 ներ: Այդ ոստաքանց բուններէն կը ծլին
 օրրատօրէ նոր և կարշնեղ ուժեր, դեռ մա-
 տաղ իրենց զաղափարին, քայլերուն մէջ,
 որոնք կու գան այսօր զարգաբելու Թէո-
 դիկի էջերը:

Եւ ո՛վ մեզմէ այնքան փութկոտ գուր-
 գուրանքով չի հետեւիր այդ մատաղ գրիչ-
 ներուն:

Թոքիոյէն մինչև ի Քալիֆորնիա թը-
 ուած են այս տարուան տարեցոյցները և

իբրեւ ամենօրեայ գրական աղօթագիրքներ
 ամենուրեք կ'ընկերեն ընթերցատէր հայուն:
 Ճոխ է իբ պլազան պարունակութեամբ.
 ստուար՝ Թէոդիկի համբերութեան չափ,
 վայելչատես և գեղատիպ՝ իր նուրբ ճա-
 շակին համամատ: Տասնեկինը ծաղկալից
 պարուններ անցուցինք Թէոդիկի բուրաս-
 տանին մէջ, ուր ամէն հայ տնկած էր ծա-
 դիկ մը, բոյս մը՝ որ իւր ազգակից եղ-
 բայրը զայ ու հոտոտէ. ահա քսաներորդը
 աւելի ճոխ աւելի գրաւիչ իբրեւ դալար
 դրասանգ մը անխոնջ հեղինակին: Այն
 գերազանց ճիգը, աշխատանքը որ անխոյ
 Թափեր է թէ՛ նախական և թէ՛ բարոյա-
 կան կերպով ի. թիւը հրատարակելու՝ զիս
 հիացմունքով կը զոդացնէ: Տարեցոյցը գե-
 ղեցիկ ոճով դասաւորուած է ինն մասերու
 մէջ. նախ տօնացոյց մը, ապա կենցաղա-
 գիտական համառօտ և գործնական էջեր:
 Երկրորդ մասը երկարատանջ և ման-
 ռազմինի ուսումնասիրութիւն մը, «ՈՐԹԻ-
 ՈՒ ԻՐ ԲԵՐՔԸ, այցեքրանական և մատենա-
 գրական ուսումնասիրութիւն Թէոդիկի», հն-
 տաքրքրական և թանկագին աշխատութիւն
 մը, ուր երբեք չափազանցեալ իսկ ման-
 րամասնութեամբ կը խօսի որթատունկին